ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ՄԱԾՁԲ-20/25

ք.Երևան *«24» հունվար 2020թ.*

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է.Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՁԵՎԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Մեսրոպյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևանի քաղաքապետարանի կարիքների համար մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1), ինչպես նաև՝ մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Պատվիրատուն Կատարողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 15 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ծառայությունը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 3.2-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **43000000 (քառասուներեք միլիոն) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **8** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչությունը:**

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան	«ՁԵՎԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	Ք. Երևան Լենինգրադյան 16
Կենտրոնական գանձապետարան	«Արարատբանկ» ԲԲԸ,
Հ/Հ 900012410537	Հ/Հ 1510036589790100
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 01807916
Է. Կիրակոսյան ----------	Ս. Մեսրոպյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«24» հունվար 2020թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-20/25
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխնիկական բնութագիրը	Չ/Մ	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	Մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1.	79951110/44	Երևան քաղաքում Մայիսի 1-ին նվիրված դրոշակազարդման և ապամոնտաժման ծառայություններ (թվով 8 հատ կամուրջների և Ֆրանսիայի հրապարակ, Բրազիլիայի հրապարակ, Ռուսաստանի Դաշնության հրապարակ և Աբովյանի պուրակ) դրոշակազարդում 0.9-2.10 չափի ՀՀ դրոշներով Հ3մ Փ0.32 մմ մետաղական ձողերով, ընդհանուր քանակը 450 հատ դրոշակաձողերով: Դրոշները և դրոշակաձողերը կտրամադրվեն պատվիրատուի կողմից միջոցառումից 10 օր առաջ:	Դրամ	1000000	1	Ք. Երևան	2020թ. Մայիսի 1-ին
2	779951110/45	Երևան քաղաքում Մայիսի 9-ին նվիրված դրոշակազարդման և ապամոնտաժման ծառայություններ (թվով 8 հատ կամուրջների և Ֆրանսիայի հրապարակ, Բրազիլիայի հրապարակ, Ռուսաստանի Դաշնության հրապարակ և Աբովյանի պուրակ) դրոշակազարդում 0.9-2.10 չափի ՀՀ դրոշներով Հ3մ Փ0.32 մմ մետաղական ձողերով, ընդհանուր քանակը 450 հատ դրոշակաձողերով: Դրոշները և դրոշակաձողերը կտրամադրվեն պատվիրատուի կողմից միջոցառումից 10 օր առաջ:	Դրամ	1000000	1	Ք. Երևան	2020թ. Մայիսի 9-ին
3	79951110/56	Մայիսի 28-ին Առաջին հանրապետության օրվան նվիրված Երևան քաղաքում դրոշակազարդման և ապամոնտաժման ծառայություններ (թվով 8 հատ կամուրջների և Ֆրանսիայի հրապարակ, Բրազիլիայի հրապարակ, Ռուսաստանի Դաշնության հրապարակ և Աբովյանի պուրակ) դրոշակազարդում 0.9-2.10 չափի ՀՀ դրոշներով Հ3մ Փ0.32 մմ մետաղական ձողերով, ընդհանուր քանակը 450 հատ դրոշակաձողերով: Դրոշները և դրոշակաձողերը կտրամադրվեն պատվիրատուի կողմից միջոցառումից 10 օր առաջ:	Դրամ	1000000	1	Ք. Երևան	2020թ. Մայիսի 28-ին
4	79951110/47	Երևան քաղաքում Սահմանադրության օրվան նվիրված թեմատիկ տոնական դրոշակազարդման ծառայութուն (թվով 10 կամուրջների դրոշակազարդում 0,9-2,10 չափի ՀՀ դրոշներով Հ3մ Փ0.32մմ մետաղական ձողերով, ընդհանուր քանակը 450 դրոշակաձողոերով և ՀՀ դրոշներով): : Դրոշները և դրոշակաձողերը կտրամադրվեն պատվիրատուի կողմից միջոցառումից 10 օր առաջ:	Դրամ	1000000	1	Ք. Երևան	2020թ. Հուլիսի 5-ին
5	79951110/48	Հայոց մեծ եղեռնին նվիրված հուշահամալիրի ճանապարհին թվով 150 սքո բուրգաձև պատվանդանների տեղադրում: Պատվանդանները պետք է երեսպատված լինեն սև ատլասե կտորով: Պատվանդանների վրա պետք է տեղադրվի հուշահամալիրի պատկերով էլեկտրոնային լուսային մոմեր: Պատվանդանները իրար հետ պետք է	Դրամ	4000000	1	Ք. Երևան	2020թ. Ապրիլի 24-ին

		կապվեն սև և կարմիր գործվածքով պարաններով (տումբաների տեսքը և չափերը, հուշահամալիրի ձևավորման սխեման համաձայն ուրվանկարի): Հուշահամալիրի տարածքում պետք է տեղադրվի և ապամոնտաժվի թվով 1 հատ մետաղական ցանկապատ հայոց Մեծ Եղեռնը ճանաչած երկրների դրոշներով: Ցանկապատի չափերն են՝ 6մ (բարձրություն) x 7մ (երկարություն), ուղղանկյուն խողովակներ՝ 60 x 30 x 2 չափերով, դրոշները ՊՎՔ 4մմ բարձրորակ տպագրությամբ 80սմ* 60սմ չափերով, յուրաքանչյուր ցանկապատի վրա 33 հատ՝ ըստ պատվիրատուի պահանջի Կարապի լճում 40քմ էկրանի տեղադրում և թեմատիկ ֆիլմերի ցուցադրում ապրիլի 23 և 24-ին:					
6	79951110/49	Երևան քաղաքում Վերջին Զանգին նվիրված տոնական ձևավորումներ: 300քմ բաներների տպագրություն և տեղադրում գովազդային վահանակներին և ստենդերին: Ազատության հրապարակում թեմատիկ 4 ստենդերի պատրաստում և տեղադրում: 300զմ փուչիկներով ձևավորում Ազատության հրապարակում: 10 հատ 2x3 չափի ֆոտոստենդների տեղադրում: Էսքիզային ուրվանկարները նախապես համաձայնեցնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչության հետ	Դրամ	2000000	1	Ք. Երևան	2020թ.մինչև Մայիսի 31-ը
7	79951110/50	Երևան քաղաքում "Երեխաների պաշտպանության օրվան" նվիրված տոնական ձևավորումներ: 200քմ բաներների տպագրություն և տեղադրում գովազդային վահանակներին և ստենդերին: Ազատության հրապարակում և երեք պուրակներում՝300զմ փուչիկներով ձևավորում ըստ պատվիրատուի պահանջի: 10 հատ 2x3 չափի ֆոտոստենդների տեղադրում և ապամոնտաժում:	Դրամ	2000000	1	Ք. Երևան	2020թ. Հունիսի 1-ին
8	79951110/51	Մասնագիտացված տոներին նվիրված, թվով 5 էլեկտրոնային էկրաններին, մինչև 15վրկ տևողությամբ հոլովակի պատրաստում և ցուցադրում, 5օր, օրական յուրաքանչյուրի վրա առնվազն 50 անգամ: 100քմ թեմատիկ գովազդային պաստառի պատրաստում և տեղադրում գովազդային վահանակների և ստենդերի վրա: 2000 հատ Ա4 ֆորմատի շնորհավորական բացիկների տպագրություն:	Դրամ	1000000	1	Ք. Երևան	2020թ. Ընթացքում մինչև դեկտեմբերի 20-ը
9	79951110/52	Հայկական բանակի օրվան նվիրված դրոշակազարդման ծառայություն (հյուսիսային պողոտա) և (թվով 10 կամուրջների դրոշակազարդում 0,9-2,10 չափի ՀՀ դրոշներով Н3մ Φ0.32մմ մետաղական ձողերով, ընդհանուր քանակը 450 դրոշակաձողերով և ՀՀ դրոշներով): : Դրոշները և դրոշակաձողերը կտրամադրվեն պատվիրատուի կողմից:	Դրամ	1000000	1	Ք. Երևան	2020թ. Հունվար 28-ին
10	79951110/53	Սուրբ Սարգսի տոնակատարության օրվան նվիրված ձևավորման ծառայություններ ա) 100քմ պաստառների տպագրություն և տեղադրում գովազդային վահանակների և ստենդերի վրա: Գովազդային նյութերի տպագրության՝ ուրվանկարները նախապես համաձայնեցնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչության հետ	Դրամ	2000000	1	Ք. Երևան	2020թ. Փետրվարի 8-ին

		բ) Մետաղական սրտի (առնվազն 4մ. տրամագիծ) տեսքով ինստալիացիայի պատրաստում և տեղադրում Կարապի լճի շրջակայքում՝ ձևավորված ծաղիկներով և գիշերային գեղարվեստական լուսավորությամբ:					
11	79951110/54	Երևան քաղաքում 2020 թ-ի ընթացքում մշակութային միջոցառումների ժամանակ մետաղական կոնստրուկցիաներով բեմերի տեղադրում, գորգապատում, բեմերի հետնամասի ձևավորում (ստենդերով ամրացված 100քմ պաստառներով, (ընդհանուր 1000 քմ) ըստ պատվիրատուի պահանջի և առաջարկված դիզայնի: Բոլոր էսքիզները և հասցեները կտրամադրվեն միջոցառումներից 10 օր առաջ:	Դրամ	5000000	1	Ք. Երևան	2020թ.-ի հունվարից մինչև դեկտեմբերի 20-ը
12	79951110/55	Թվով 10 վարչական շրջաններում արհեստական տոնածառների տեղադրում և ապամոնտաժում: Արհեստական տոնածառները մետաղական կոնստրուկցիաներով են, արհեստական ճյուղերով, բարձրությունը 10մ: Անհրաժեշտ է արհեստական տոնածառերի ճյուղերի տեսակավորում, ճյուղերի վնասված լուսադիոդային էլեկտրական լույսերի վերանորոգում և միացումների իրականացում, տեղափոխում վարչական շրջաններ, տեղադրում առնվազն 18 մ-ոց հատուկ ավտոաշտարակով: Տոնածառերի մետաղական կոնստրուկցիաների և արհեստական ճյուղերի հավաքում, լուսավորության փորձարկում: Տոնածառները պետք է ձևավորվեն լուսադիոդային լույսերով, խաղալիքներով և գագաթի լուսավորությամբ ըստ պատվիրատուի պահանջի: Անհրաժեշտ է ապահովել դեկտեմբերի 5-ից մինչև հունվարի 15-ը 24 ժամյա հերթապահություն, լուսավորության խափանման դեպքում ցանկացած ժամի անմիջապես համապատասխան մասնագետի օգնությամբ վերականգնել լուսավորությունը: Հունվարի 14-ից ապամոնտաժում ճյուղերի, խաղալիքների տեսակավորում ըստ վարչական շրջանների և տեղափոխում պահեստ: Ազատության հրապարակում 20մ բարձրությամբ արհեստական մետաղական կոնստրուկցիաների և արհեստական ճյուղերի տեղափոխում պահեստից, տեղադրում առնվազն թվով 3 հատ 22 մ-ոց հատուկ ավտոաշտարակներով: Տոնածառը պետք է ձևավորված լինի լուսադիոդային լույսերով, խաղալիքներով և գագաթի լուսավորությամբ ըստ պատվիրատուի պահանջի: Անհրաժեշտ է ապահովել դեկտեմբերի 5-ից մինչև հունվարի 15-ը 24 ժամյա հերթապահությամբ: Լուսավորության խափանման դեպքում ցանկացած ժամի անմիջապես համապատասխան մասնագետի օգնությամբ վերականգնել լուսավորությունը: Հունվարի 14-ից ապամոնտաժում, ճյուղերի տեսակավորում և տեղափոխում պահեստ: Հանրապետության հրապարակում մայր տոնածառի 14.4 մ տրամագծով, 35 մ բարձրությամբ և 7453 կգ քաշով մետաղական հենակմախքի տեղափոխում պահեստից և տեղադրում, 3780 կգ ընդհանուր քաշով ճյուղերի մոնտաժում հենակմախքին, 30 000 կգ ընդհանուր քաշով բետոնե ծանրոցների տեղադրում՝ հիմնակմախքը ամրանավորելու համար, լուսային շարանների հորիզոնական մոնտաժում, հորիզոնական շարքերի հեռավորությունը 8 սմ-ից ոչ ավել լուսատվության փորձարկում, թվով 1500 հատ	Դրամ	22000000	1	Ք. Երևան	2020թ. Դեկտեմբերի 5-ից մինչև 2021 թվականի հունվարի 25-ը

		խաղալիքներով ձևավորում, գազաթի տեղադրում համաձայնեցնելով պատվիրատուի հետ: Մոնտաժման և ապամոնտաժման աշխատանքները իրականացնել առնվազն 1 հատ 40 մ-ոց վերամբարձ կռունկի և առնվազն 4 հատ 22 մ-ոց ամբարձիչների միջոցով: Լուսավորության վահանակների տեղադրում, լուսավորության փորձարկում: Անհրաժեշտ է ապահովել դեկտեմբերի 5-ից մինչև հունվարի 15-ը 24 ժամյա հերթապահությամբ:Լուսավորության խափանման դեպքում ցանկացած ժամի անմիջապես համապատասխան մասնագետների օգնությամբ վերականգնել լուսավորությունը: Հունվարի 14-ից ապամոնտաժում, հենակմախքի տեսակավորում և համարակալում ըստ շարքերի , խաղալիքների և լույսերի տեսակավորում , տեղավորում արկղերում, տեղափոխում պահեստ: Աշխատանքները իրականացնել վերը նշված բարձրությունների վրա աշխատելու իրավունք ունեցող համապատասխան մասնագետների միջոցով:					
				43000000			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410537
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՁԵՎԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ
Ք. Երևան Լենինգրադյան 16
«Արարատբանկ» ԲԲԸ,
Հ/Հ 1510036589790100
ՀՎՀՀ 01807916

Ս. Մեսրոպյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«24» հունվար 2020թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-20/25
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	Մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	***Ընդամենը***
1	79951110/44	Երևան քաղաքում Մայիսի 1-ին նվիրված դրոշակազարդման և ապամոնտաժման ծառայություններ	------	------	------	------	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000
2	779951110/45	Երևան քաղաքում Մայիսի 9-ին նվիրված դրոշակազարդման և ապամոնտաժման ծառայություններ	------	------	------	------	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000
3	79951110/56	Մայիսի 28-ին Առաջին հանրապետության օրվան նվիրված Երևան քաղաքում դրոշակազարդման և ապամոնտաժման ծառայություններ	------	------	------	------	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000
4	79951110/47	Երևան քաղաքում Սահմանադրության օրվան նվիրված թեմատիկ տոնական դրոշակազարդման ծառայություն	------	------	------	------	------	------	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000
5	79951110/48	Հայոց մեծ եղեռնին նվիրված հուշահամալիրի ճանապարհին թվով 150 սքո բուրգաձև պատվանդանների տեղադրման ծառայություն	------	------	------	4000000	4000000	4000000	4000000	4000000	4000000	4000000	4000000	4000000	4000000
6	79951110/49	Երևան քաղաքում Վերջին Զանգին նվիրված մշակութային միջոցառումների ծառայություններ	------	------	------	------	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000
7	79951110/50	Երևան քաղաքում "Երեխաների պաշտպանության օրվան" նվիրված մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	------	------	------	------	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000
8	79951110/51	Մասնագիտացված տոներին նվիրված մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	------	------	------	------	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000

9	79951110/52	Հայկական բանակի օրվան նվիրված դրոշակազարդման ծառայություն	--------	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000
10	79951110/53	Սուրբ Սարգսի տոնակատարության օրվան նվիրված ձևավորման ծառայություններ	--------	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000
11	79951110/54	Երևան քաղաքում 2020 թ-ի ընթացքում մշակութային միջոցառումների ժամանակ մետաղական կոնստրուկցիաներով բեմերի տեղադրում, գորգապատում, բեմերի հետնամասի ձևավորման կազմակերպման ծառայություններ	----------	1250000	1250000	2500000	2500000	2500000	3750000	3750000	3750000	5000000	5000000	5000000	5000000
12	79951110/55	Թվով 10 վարչական շրջաններում արհեստական տոնածառների տեղադրում և ապամոնտաժման կազմակերպման ծառայություններ	----------	----------	----------	----------	----------	----------	----------	----------	----------	22000000	22000000	22000000	22000000
		ԸՆԴԱՄԵՆԸ	--------	4250000	4250000	9500000	17500000	17500000	19750000	19750000	19750000	**43000000**	**43000000**	**43000000**	**43000000**

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
Ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410537
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՁԵՎԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ
Ք. Երևան Լենինգրադյան 16
«Արարատբանկ» ԲԲԸ,
Հ/Հ 1510036589790100
ՀՎՀՀ 01807916

Ս. Մեսրոպյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
«24» հունվար 2020թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-20/25
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«24» հունվար 2020թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-20/25
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն